Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Մ. Ոսկանյան

31.08.2021թ.

ՀՀ Շիրակի մարզի <<Հայրենյացի միջնակարգ դպրոց >>

ՊՈԱԿ-ի

ուսումնադաստիարակչական աշխատանքների

տարեկան ծրագիր

2021-2022թթ. ուս. տարի

Տնօրեն՝ Մ. Ոսկանյան

N0	Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ	ԺԱՄԿԵՏ
	1. Կազմակերպչական հարցեր		
1	I դասարանցիների ընդունելությունը կազմակերպել ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության հրահանգի համաձայն :	տնօրեն, փոխտնօրեն	մինչև 5/09
2	Անցկացնել փորձնական դաս 30.08.2022, ամփոփել արդյունքները և միջոցներ ձեռնարկել թերությունները վերացնելու ուղղությամբ:	տնօրեն, դասղեկ	30.08.2022թ
3	Կազմակերպել և բարձր պատասխանատվությամբ անցկացնել դասագրքերը աշակերտներին վարձույթով տալու գործը: Հնարավորության սահմաններում անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերը տրամադրել անվճար:	դասղեկ, գրադարան	սեպտեմբեր
4	Կատարել աշխատանքի բաշխում տնօրենի, փոխտնօրենների, դպրոցի ներքին օղակների ղեկավարների միջև:	տնօրեն	սեպտեմբեր
5	Դպրոցը ապահովել մասնագետ ուսուցիչներով: Ժամանակին ավարտել դասաբաշխումն ու տարիֆիկացիան:	տնօրեն	մինչև 9.09
6	Կազմակերպել և անցկացնել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել ծնողական խորհրդի նախագաններ և ձևավորել դպրոցական ծնողական խորհրդի կազմը : Աշակերտական խորհրդի կազմի ձևավորում :	տնօրեն, դասղեկ-դասվար	1-3/09
7	Հոգ տանել դպրոցի հակահրդեհային պահպանության և երեխաների անվտանգության մասին:	կազմակ. դասղեկ	ուստարվա ընթացքում
8	Կազմակերպել և անցկացնել միջոցառում՝ նվիրված սեպտեմբերի 1-ին՝ <<Գիտելիքների օր>> խորագրով: Ուստարին սկսել ՀՀ դրոշի բարձրացման արարողությամբ և ՀՀ օրհներգով:	կազմակերպիչ դասղեկներ	1/09
9	Ստեղծել համագործակցային մեթոդներով աշխատող ուսուցիչների թիմ և նրանց փորձը տարածել մեր և հարևան դպրոցներում:	փոխտնօրեն	սեպտեմբեր

№	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ	ԺԱՄԿԵՏ
	2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ		
1 ա)	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կրթության գիտության մշակույթի ու սպորտի նախարարության՝ դպրոցին ուղղված նոր պահանջներին, այս ուստարում կատարված փոփոխություններին:	տնօրեն	սեպտեմբեր, հոկտեմբեր
բ)	Ապահովել դպրոցի բոլոր ուսուցիչների մասնակցությունը հայ ազգային դպրոցի հիմնադրույթների իրականացման գործին:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
2	Մեծ տեղ տալ մանկավարժական հանրույթի ինքնուրույնությանը, անհարկի չկանոնակարգել ուսուցիչների աշխատանքը:	տնօրեն, փոխտնօրեն	ուստարվա ընթացքում
3	Միջոցներ ձեռնարկել ուսումնադաստիարակչական գործընթացը կատարելագործելու, դպրոցում մանկավարժական աշխատանքի ստեղծագործական մթնոլորտ ստեղծելու, ժողովրդական ավանդույթները ուսուցման մեջ ներգրավելու գործում:	տնօրեն, փոխտնօրեն	ուստարվա ընթացքում
4	Ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումը ապահովելու նպատակով արմատապես բարելավել ուսումնական բոլոր առարկաների դասավանդման դրվածքը՝ կիրառելով վերապատրաստումների արդյունքում ձեռք բերած նոր հմտությունները նոր մեթոդների ուղղությամբ: Դասավանդման պրոցեսում ներմուծել ժամանակակից համագործակ-ցային մեթոդները (ինտերակտիվ, թիմային, օնլայն)՝ չմոռանալով համակարգչի օգտագործումը՝ որպես ուսուցման որակի բարձրացման միջոց:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
5	Հասնել այն բանին, որ բոլոր դասարանների աշակերտների մեծ մասը ապահովեն նոր ուսումնական տարվա համար երաշխավորված դասագրքերով:	տնօրեն, դասղեկ, ծնող	սեպտեմբեր
6	Սովորողների հայեցի դաստիարակությունը իրականացնելու նպատակով վերակառուցել ուսումնական բոլոր առարկաների և հատկապես հայոց լեզվի և գրականությոան, հայոց պատմության , Հայաստանի աշխարհագրության դասավանդումը (ինտերակտիվ, բազմաբնույթ և այլ մեթոդներ):	մանկավարժ, հանրույթ	ուստարվա ընթացքում
7	Ուսումնասիրել IX դասարաններում հայոց լեզվի և գրականության վիճակը և ներկայացնել մանկավարժական խորհրդի քննարկմանը, որպես հիմնական դպրոցի ավարտական դասարան:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում

8	Ուսումնասիրել կրտսեր դպրոցում մայրենիի՝ դասավանդման դրվածքը՝ ըստ առարկայական պետական չափորոշիչների:	փոխտնօրեն	տարվա ընթացքում
9 ա)	Ուսումնասիրել VI- VIII դասարաններում հայոց պատմության , Հայաստանի աշխարհագրության դասավանդման դրվածքը դասավանդման նոր մեթոդների կիրառությամբ: Ապահովել պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
բ)	Գործնական միջոցներ ձեռնարկել բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման առավել արդյունավետ ձևերի ու մեթոդների ներդրման ուղղությամբ: Օգտվել համակարգչային ծառայություններից: Ուսումնասիրել մաթեմատիկայի դասավանդման դրվածքը V- VI դասարանում:	տնօրեն, փոխտնօրեն, Մ/մ նախագահ	տարվա ընթացքում
գ)	Ստուգել միջին դպրոցում սովորողների գիտելիքների մակարդակը և դրանք գործնականում կիրառելու հմտությունը բնագիտական առարկաներից,օգնել ուսուցիչներին այդ գործում նկատված թերությունները վերացնելու հարցում, օգտվել համակարգչային կաբինետից և ինտերնետից:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
դ)	Ուսումնասիրել միջին դպրոցում սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ ուսուցիչների աշխատանքը օտար լեզվից:	փոխտնօրեն, Մ/Մնախագահ	տարվա ընթացքում
ե)	Մեծ տեղ տալ սովորողների համակողմանի և խորացված ուսուցմանը: Այդ նպատակով լրջորեն հաշվի առնել վերջիններիս նախասիրություններն ու հետաքրքրությունները և ըստ այնմ կազմակերպել ուսպլանի՝ դպրոցական պարտադիր բաղադրիչի ժամերի բաշխումը:	տնօրեն, Մ/Մ նախագահ	օգոստոս, տարվա ընթացքում
10	Սովորաղների գիտելիքների մակարդակը ուսումնասիրել և նրանց առարկայի նկատմամբ հետաքրքրությունների շրջանակը լրացնելու նպատակով անցկացնել առարկայական օլիմպիադաներ քիմիայից, ֆիզիկայից, մաթեմատիկայից, հայոց լեզվից և այլն: Ինչպես նաև այդ առարկաներից անցկացնել միջդասարանային մրցույթներ	տնօրինություն	տարվա ընթացքում
11	Ուսումնասիրել դասի արդյունավետության բարձրացման ու միջակության հաղթահարման ուղղությամբ միջին դպրոցի հումանիտար առարկաների ուսուցիչների աշխատանքը և արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում: Դնել բաց դասեր՝ դասավանդման նոր մեթոդների կիրառմամբ և անցկացնել փորձի փոխանակումներ:	փոխտնօրեն, Մ/Մնախագահ	տարվա ընթացքում

12	Ուսումնասիրել միջին դպրոցում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության ուսուցիչների կողմից փորձերի, լաբորատոր ու գործնական աշխատանքների կազմակերպման և դրանք պրակտիկայում կիրառելու ուղղությամբ տարվող աշխատանքը և օգնել նրանց՝ նկատված թերությունները հաղթահարելու գործում: Օգտվել ինտերնետից և համակարգչային ծառայություններից, որտեղ առկա են հայալեզու նյութեր, լաբորատոր փորձեր և այլն:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
13	Սովորողների ռեալ գիտելիքների մակարդակը պարզելու և այդ ուղղությամբ ուսուցիչների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով ուստարվա I-II կիսամյակի վերջում տնօրինության կողմից բոլոր դասարաններում անցկացնել գրավոր ստուգողական աշխատանքներ տարբեր առարկաներից և արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդակցությունում, մ/մ նիստերում:	փոխտնօրեն, Մ/Մ նախագահ	տարվա ընթացքում
14	Ուսումնասիրել բոլոր առարկաների գծով ծրագրային նյութերի կատարողականի, ընթացիկ ու թեմատիկ կրկնությունների կազմակերպման վիճակը և օգնել ուսուցիչներին այդ ուղղությամբ:	փոխտնօրեն, Մ/Մնախագահ	դեկտեմբեր, մայիս
15	Անգլերենի դասավանդումը կատարագործելու և խորացնելու նպատակով նպատակային օգտագործել դպրոցում գործող անգլերենի՝ կահավորված ժամանակակից կաբինետը, որը կօգնի ուսուցիչներին՝ իրենց առջև դրված խնդիրները ավելի արդյունավետ լուծելու:	փոխտնօրեն	տարվա ընթացքում
16	Գնահատումը կատարել 10 բալյան և գործակիցների կիրառման կարգով:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
17	Փոխտնօրենի անմիջական հսկողությամբ ծանոթանալ առարկայական մեթոդական նամակներին և առաջնորդվել դրանցով:	փոխտնօրեն	սեպտեմբեր
18	Կազմակերպել ուսուցիչների հերթական վերապատրաստրաստման գործընթացը:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում

№	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ	ԺԱՄԿԵՏ
	3. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ		
1	Սովորողների գաղափարաբարոյական դաստիարակության գերխնդիրը համարել ազգային ինքնորոշման, միասնության և անկախ պետականության ամրապնդման գաղափարը:	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցիչ	տարվա ընթացքում
2	Ամրապնդել և խորացնել ուսուցման և դաստիարակության կապը: Պահանջել ուսուցիչներից՝ դասավանդման ընթացքում ուսումնական բոլոր առարկաներից մատուցվող նյութերը հնարավորության սահմաններում սերտորեն զուգակցել ՀՀ քաղաքական, սոցիալ-տնտեսական և երեխաների կյանքին վերաբերող խնդիրների հետ:	մանկավ. հանրույթ.	մշտապես
3	Հումանիտար առարկաների դասավանդումը խելացիորեն նպատակամղել հայ ժողովրդի հոգևոր աշխարհը ճանաչելուն, նրա ավանդույթների պատմական ակունքների և երկրի զարգացման ընդհանուր օրինաչափությունների ճիշտ ընբռնմանը՝ հայեցի դաստիարակության խնդիրը լուծելու համար:	մանկավ. հանրույթ.	մշտապես
4	Կազմակերպել տարբեր դասարանների աշակերտների ստուգատես - մրցույթ՝ ուսուցիչների պատասխանատվությունը բարձրացնելու և աշակերտների ձեռք բերած գիտելիքները, ունակություններն ու կարողությունները ստուգելու նպատակով: Վերանայել դասղեկների կազմը, օգնել նրանց աշխատանքների պլանավորման և դրանց իրականացման գործում:	կազմակերպիչ	տարվա ընթացքում
5.	Կրթօջախում կազմակերպել <<Լավագույն դասղեկ>>-ի մրցույթ, <<Ով, որտեղ, երբ>> գիտակների մրցույթ, բարձր առջադիմություն ունեցող, ակտիվ, կարգապահ դասարանի մրցույթ:	կազմակերպիչ	տարվա ընթացքում
6.	Մեծ շուքով և հանդիսավորությամբ նշել Գիտելիքի օրը, Հայաստանի Հանրապետության անկախության 31-րդ ամյակը , Ուսուցչի օրը, Գեղեցկության և մայրության տոնը և մյուս տարելիցները:	կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
7.	Ուժեղացնել սովորողների ռազմա հայրենասիրական գծով դաստիարակչական աշխատանքները : Կրտսեր դպրոցի դասարանները անվանակոչել Արցախյան մարտերում հերոսաբար ընկած ,մեր հերոս սաների՝Միշա Հարությունյանի,Լևոն Մանոյանի,Մանվել Ալեքսանյանի և այլոց անուններով:Կազմակերպել հարգանքի ու խոնարհումի միջոցառումներ,պարբերաբար այցեր համայնքի պանթեոն :	զինղեկ, կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում

8.	Բարձրացնել ռազմագիտության դասավանդման դրվածքը, առարկայի նկատմամբ պատասխանատվության զգացումը VIII-IX դասարաններումում, ինչպես նաև՝ տալ ծանոթացում տարրական դասարաններում:	զինղեկ	տարվա ընթացքում
9.	Համակարգիչների միջոցով ստեղծել լավագույն աշակերտների, լավագույն ուսուցչի և դասղեի թղթապանակներ, լավագույն միջոցառումների էջեր և դրանք դարձնել հասանելի բոլորի համար:	ուսուցիչներ, դասղեկ	ուստարվա ընթացքում
10.	Կազմակերպել գրական- գեղարվեստական ցերեկույթ և ձևավորել <<Փառքի սրահ>>նվիրված Շուշիի ազատագրական մարտերում զոհված՝ դպրոցի նախկին սաներին :	դասղեկ, փոխտնօրեն	Ուստարվա ընթացքում
11.	Ուշադրության կենտրոնում պահել ծնողազուրկ, անապահով ընտանիքների երեխաներին, հնարավորության դեպքում կազմակերպել օգնություն, տալ անվճար դասագրքեր, գրենական պիտույքներ:	տնօրեն, փոխտնօրեն, դասղեկ	տարվա ընթացքում
12.	Անցկացնել միջոցառումներ՝ նվիրված Իսահակյանի , Տերյանի, Սևակի, Շիրազի և մյուս մեծերի ծննդյան տարելիցներին ու ստեղծագործություններին:	կազմ. հայոց լ. գրակ. ուսուցիչ	II կիսամյակ
13.	Բազմաբնույթ միջոցառումների միջոցով երեխաների գիտակցությանը հասցնել հայ եկեղեցու ազգապահպան դերը մեր ժողովրդի գոյատևման և ազգային մշակույթի զարգացման գործում: Աշակերտների համար կազմակերպել զեկույցներ և զրույցներ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու վերաբերյալ, անցկացնել բաց դասեր նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին :	կազնակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
14.	Մարմնակրթության պարապմունքներում մեծ տեղ տալ ազգային մարզային խաղերի, մրցումների ու հանդիպումների կազմակերպմանը, Անցկացնել սպորտլանդիաներ դասարանների միջև : Ֆիզկուլտուրայի ժամերի մեծ մասը անցկացնել խաղահրապարակում:	կազնակերպիչ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ	տարվա ընթացքում
15.	8-9-րդ դասարանի աշակերտներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության հիմնադրույթներին հետ:	դասղեկ	տարվա ընթացքում
16.	Ստեղծել հանրակրթական հաստատության ծնողական խորհուրդ և այն ակտիվորեն ներգրավել հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Համագործակցակցել նաև դպրոցի կառավարման խորհրդի և աշակերտական խորհրդի հետ:	դասղեկ	1-3/IX տարվա ընթացքում
17.	Ուսումնական և արտաուսումնական պարապմունքների և միջոցառումներումների ընթացքում բարելավել երեխաների գեղագիտական դաստիարակության վիճակը: Կրթօճախում ստեղծել ժողովրդական պարերի խմբակ:	կազմակերպիչ	տարվա ընթացքում
18.	Բարելավել սովորողների նախնական զինվորական պատրաստության դրվածքը : Բարձր պատասխանատվությամբ նախապատրաստել դպրոցի աշակերտներին՝ ազգային բանակում ծառայելու համար:	զինղեկ	տարվա ընթացքում

19.	Մեծ տեղ տալ սովորողների իրավական դաստիարակությանը : ՆԳ մարմինների հետ համագործակցելով կանխել դժվար դաստիարակվող անչափահասների կողմից հնարավոր օրինախախտումները : Կազմակերպել հանդիպումներ և զեկուցումներ ոստիկանության անչափահասների բաժնի տեսուչների հետ:	կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
20.	Ուսումնասիրել և խորհրդակցություններում քննարկել դասղեկների կողմից անչափահասների հետ տարվող աշխատանքների վիճակը և միջոցառումներ իրականացնել եղած թերությունները վերացնելու ուղղությամբ:	կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
21.	Պահանջել ուսուցիչներից և դասղեկներից՝ սովորողների գիտակցությանը հասցնել նիկոտինի, ալկոհոլի, թմրանյութերի վնասների մասին տեղեկությունները և նյութերը, միջոցներ ձեռնարկել դրանցից դպրոցականներին զերծ պահելու ուղղությամբ: Կազմակերպել և ներկայացնել <<Ծխախոտի դատը>> միջոցառումը :Արգելել հեռախոսներից օգտվել դասերի ընթացքում :	տնօրեն, կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
22.	Կազմակերպել նկարների և աշխատանքի ուսուցման աշխատանքների մրցույթ:	կազմակերպիչ, խմբակի ղեկավար	տարվա ընթացքում
23.	Հաճախակի զբաղվել դպրոցամերձ հողամասի մաքրման և մրգատու այգու խնամքով, ծաղկանոցի բարեկարգմամբ:Արցախյան պատերազմներում զոհված հերոսների անվան այգու խնամքով :	կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
24.	Դպրոցում ձևավորել աշակերտական խորհուրդ՝ իր նախագահով և կազմով: Այդ խորհրդին տալ գործունեության լայն ասպարեզ ու հնարավորություն : Աջակցել վերահսկել:	կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
25.	Կազմակերպել և անցկացնել միջոցառում <<Պատարագ >> թեմայով:	կազմակերպիչ, դասղեկ ՀԵՊ ուսուցիչ	տարվա ընթացքում
26.	ՀՀ օրհներգի պարտադիր ուսուցման կազմակերպում: Յուրաքանչյուր երկուշաբթի դասերն սկսել օրհներգով:	դասղեկ	տարվա ընթացքում
27.	Կազմակերպել <<Սա է իմ պետությունը>> <<Հասցես Հայաստանն է>>, <<Իմ քաղցր լեզու, իմ անուշ լեզու, իմ հայոց լեզու>>, <<Ես եմ իմ երկրի զինվորը>> թեմաներով ցուցապաստառների, էսքիզների և շարադրությունների մրցույթ:	կազմակերպիչ, դասղեկ	մինչև 2023թ. նոյեմբեր
28.	Կազմակերպել գիտաճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմամշակույթային վայրեր, հուշարձաններ և թանգարաններ:	կազմակերպիչ, դասղեկ	տարվա ընթացքում
29.	Կազմակերպել և անցկացնել ասմունքի հանրապետական մրցույթ ներդպրոցական փուլ (Հով. Թումանյան, Ավ. Իսահակյան):	կազմակերպիչ, դասղեկ	Սեպտեմբեր - հոկտեմբեր
30.	Աշակերտների հայրենասիրական դաստիարակությունը բարձրացնելու համար անցկացնել	կազմակերպիչ,	տարվա

	Նժդեհական օրեր:	դասղեկ	ընթացքում

	Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ	ԺԱՄԿԵՏ
	4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ		
1	Ուսուցիչների հետ տարվող աշխատանքի հիմքում դնել դեմոկրատացման սկզբունքները, հաշվի առնել նրանց ցանկություններն ու փորձը:	տնօրեն	ուստարվա ընթացքում
2	Ընթացիկ տարում ուսումնասիրել և տարածել ներքոհիշյալ ուսուցիչների առաջավոր փորձը: 1. Գայանե Մատինյան 4. Աստղիկ Մաթևոսյան 2. Էլլա Ծատուրյան 5. Արուսյակ Մաթևոսյան 3. Աիդա Պետրոսյան 6. Հայաստան Դիլոյան	տնօրեն,Մ/Մ նախագահ	տարվա ընթացքում
3	Հետևողականորեն զբաղվել ուսուցիչների ինքնակրթության բարձրացման գործով: Պահանջել յուրաքանչյուր ուսուցչից՝ տարվա ընթացքում մշակել մանկավարժական որևէ թեմա: Ուսումնական տարվա վերջում դպրոցում կազմակերպել մանկավարժական ընթերցումներ:	տնօրեն	մայիս
4	Ուժեղացնել ուսուցիչներին ցույց տրվող մեթոդամանկավարժական օգնությունը և վերահսկողությունը : Նրանց մոտ լսել սահմանված քանակի դասաժամեր և օգնել դժվարությունների հաղթահարման գործում: Ուշադրության կենտրոնում պահել հատկապես սկսնակ ուսուցիչներին:	տնօրինություն	տարվա ընթացքում
5	Գրադարանում ստեղծել մեթոդական գրականության անկյուն և հնարավորության սահմաններում այն հարստացնել մեթոդամանկավարժական գրականությամբ և ուսումնական ձեռնարկներով: Հասնել այն բանին, որ բոլորն օգտվեն այդ գրականությունից և ծանոթանան բոլոր նորություններին :	տնօրեն. գրադարան.	տարվա ընթացքում
6	Դպրոցում ստեղծել առարկայական մեթոդմիավորումներ, հանձնարարել նախագահներին՝ կազմելու աշխատանքի գործարար պլաններ , դրանցում մեծ տեղ տալ դասագրքերում ու ծրագրերում եղած փոփոխությունների քննարկմանն ու հաստատմանը, ծրագրային նյութերի կատարողականներին, դասավանդման նոր ՝ համագործակցային մեթոդներով դասերի անցկացմանը՝ ի շահ աշակերտների կրթության որակի բարձրացմանը:	փոխտնօրեն,Մ/Մ նախագահ	տարվա ընթացքում
7	Կազմակերպել և անցկացնել մշտական գործող կոնսուլտացիաներ, բաց դռների օրեր և փոխադարձ դասալսումներ:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում

8	Ուսումնասիրել լեզուների մասնագիտական խմբի աշխատանքը՝ ուսուցիչներին ցույց տրվող մեթոդամանկավարժական օգնության և առաջավոր փորձի ընդհանրացման ուղղությամբ:	տնօրեն, փոխտնօրեն	տարվա ընթացքում
9	Տնօրինությանը կից խորհրդակցությունում լսել ֆիզմաթ, քիմիա կենսաբանություն, հայոց լեզու և պատմաաշխարհագրական Մ/Մ –ի նախագահների հաղորդումները՝ նշված առարկաների դասավանդումը վերահսկելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:	փոխտնօրեն, մ/մ	տարվա ընթացքում
10	Պահանջել ուսուցիչներից՝ շատ ժամանակ անցկացնել գրադարանի ընթերցասրահում և զբաղվել ինքնակրթությամբ:	տնօրեն	տարվա ընթացքում
11	Կազմակերպել ուսուցիչների համակարգչային ուսուցում և հասնել այն բանին, որ բոլորն ունենան համակարգչային տարրական գիտելիքներ և կարողանան օգտվել դրանցից:	տնօրեն համակարգչային օպերատոր	տարվա ընթացքում
12	Պահանջել բոլոր ուսուցիչներից, որ ամիսը առնվազն 1 ժամ անցկացնեն համակարգչային սենյակում և համակարգչիչն օգտագործեն որպես դասավանդման որակի բարձրացման միջոց:	տնօրեն հնկ.ղեկ	տարվա ընթացքում
13	Կազմել վերապատրաստվող ուսուցիչների գրաֆիկ 2023թվականի համար:	տնօրեն	տարվա ընթացքում

N0	Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ	ԺԱՄԿԵՏ
	5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ		
1	Մանկավարժական խորհրդի նիստ հրավիրել ոչ պակաս քան կիսամյակը երկու անգամ: Դրանցում մեծ տեղ տալ դպրոցի առջև ծառացած հիմնահարցերի և խնդիրների քննարկմանն ու լուծմանը:		
1	I-նիստ Լսել գրադարանավարի զեկույցը՝ աշակերտների դասագրքերով ապահովածության վիճակի մասին:	տնօրեն	Օգոստոս
2	Տնօրենի հաշվետվություն : 2022-2023ուստարվա համադպրոցական աշխատանքների պլանի քննարկում և հաստատում:	տնօրեն	Օգոստոս
3	Ուսպլանի հաստատում:	տնօրեն, փոխտնօրեն	Օգոստոս
4	Դպրոցի մանիկխորհի կազմի և քարտուղարի ընտրություն: Ընթացիկ հարցեր:	տնօրեն, փոխտնօրեն	սեպտեմբեր
1	I I –նիստ 2022-2023 ուստարվա սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսների՝ մանկավարժական հանրույթիաշխատանքների արդյունքները՝ կապված ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման հետ :	տնօրեն, փոխտնօրեն	նոյեմբեր
2	Լսել VIII և IXդասարանների դասղեկների հաղորդումները՝ երկու ամսվա կատարած աշխատանքների մասին՝ հատկապես գիտակցական կարգապահության բարձրացման ուղղությամբ կատարված:	փոխտնօրեն, դասղեկ	
3	5-րդ դասարաններում հայոց լ. և մաթեմատիկայից տրված ստուգողական աշխատանքների ամփոփում:		

1	I I I –նիստ I կիսամյակի արդյունքները և I I կիսամյակի խնդիրները՝ կապված դասի արդյունավետության բարձրացման նոր ձևերի ու մեթոդների ներդրման հետ ինչպես և ինչքանով է համակարգիչն օգտագործվում այդ նպատակով: Ինչ է արվում ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ:	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցիչներ	
2	Հայոց լեզվից, մաթեմատիկյից և ռուսաց լեզվից II-IX դասարաններում տնօրինության կողմից տրված ստուգողական գրավոր աշխատանքների արդյունքների քննարկումը:	փոխտնօրեն	
3	Սովորողների ձմեռային արձակուրդների կազմակերպման մասին:	փոխտնօրեն	դեկտեմբեր
1	IV նիստ Լսել հայոց լեզվի և պատմության Մ/Մ նախագահների հաշվետվությունները ուսուցիչների մանկավարժական վարպետության բարձրացման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:	Մ/Մ նախագահ	մարտ
2	Սովորողների գիտակցական կարգապահության բարձրացման ուղղությամբ I –IV դասարանների ղեկավարների կատարած աշխատանքի վերաբերյալ դաստիարակության գծով փոխտնօրենի հաղորդումը:	Կազմակերպիչ դասվարներ	
3	V III- IX դասարաններում բնագիտական, իսկ IV-VIIդասարաններում հումանիտարառարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրության և այդ գործում եղած թերությունների վերացման մասին:	փոխտնօրեն	
1	V նիստ Ուսումնական բոլոր առարկաների ծրագրային նյութերի կատարողականի մասին :	փոխտնօրեն	
2	Թեմատիկ կրկնությունների կազմակերպման, քննությունների նախապատրաստական աշխատանքների և ավարտական դասարանների աշակերտների քննությունների մասնակցելու թույլտվության մասին:		մայիս
3	Լսել ֆիզկուլտուրայի և ռազմագիտության ուսուցիչների հաղորդումները՝ սովորողների ֆիզիկական պատրաստության և պատանիներին զինվորական ծառայության նախապատրաստելու ուղղությամբ կատարած աշխատանքի մասին:	Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, զինղեկ	

4	I V նիստ Տարեվերջյան քննությունների արդյունքների, վերաքննությունների և ամառային աշխատանքների կազմակերպման, IX դասարանն ավարտելու և փոխադրական դասարանների աշակերտներին հաջորդ դասարաններ փոխադրելու մասին:	տօրեն	հունիս